

է նա ինքն Ձերու խաբան, առ գիշարանձ կո-
րին իւր Շաթ, թէ 'Հասին ի վերայ իմ հէնք
եւ ոչ յաւելուս տեսանել զերեսս իմ. եւ փո-
խանակ զի ոչ կացի ես յախատանի, այլ
ձգտեցայ յանպատշաճ թաղաւորութիւն, որ
ոչ էր ինձ անկ, վասն այն յամբարտաւանիւն
իմում եւ յայսմ բարձրութենէ անկայ: Եւ
արդ զու մի յապաղեր սատակել զազգսդ որ
ընդ քեզ են. եւ ջանա ապրիլ ի ձեռաց զոցս,
զի մի ի յառաջագոյն լսել զոցս զեղեակքս՝
վաղվաղեացեն պատառել զքեզ. այլ ես կո-
րեայ եւ անզաւակեցայ» (194—195):

Այս պատգամը ստանալուն պէս «անդէն
զարձոյց զերեսս իւր կաթսայն հիւսիսոյ
(Շաթ) յետ ընդդէմ որդուցն իւրոց. սկսաւ
ողորել իւրովք ընդ ինքն, ցանել զեռանդն
բարկութեան իւրոյ ի վերայ կորեանց իւրոց
եւ տուժիլ ընդ միոյ զհազարս եւ ընդ երկուց
զբիւրս» (193—194):

Այս կապակցութեամբ հարկ է Բ. 16
գլխին վերջին երկու էջերու մէջ թղթերու
ետեւառաջութիւն ենթադրել, ինչպէս վերա-
գոյն յիշեցի, էջ 284, 17 (գորաց) իւր շարու-
նակութիւնն ունի էջ 285, 6 (այլ մեք) —
22 (անզաւակեցայ) տողերը. որ կը շարունա-
կուի իւր կարգին էջ 284, տ. 18 (անդէն) —
285, տ. 7 (նման):

Շաթ պատերազմիկ գորքը յանձնած էր
Չորպան Թարխանի: Այդ գորքը կազմուած
էր զանազան ցեղերէ: Իր շուրջը ունէր Շաթ
արքունական ոստանիկ թիկնապահներն եւ
հաւատարիմները: Գիտցաւ ան անշուշտ բո-
ւստին լըջութիւնը եւ անոր համաձայն դա-
սաւորեց իր հաւատարիմները. այս ինքն
կիրճին մուտքն եւ ելքը փակելով յարձակե-
ցաւ այրացիկ եւ վտանգաւոր զօրքին վրայ եւ
կոտորեց սակաւ կորուստով: Այս պատա-
հած ըլլալու է մայիս-յունիսին: Իր վերա-
դարձը սակաւաթիւ մնացորդներով պէտք է
եղած ըլլայ նոյն տարւոյ յունիսին:

Ձերու խաբանի մահուան մասին տեղե-
կութիւններ կը հաղորդէ Հօէի-Լի Հիուեն-
ցանգի վարքին մէջ, որ հասած է մեզի Սի-
ի-բի խմբագրութեամբ 648ին: Այս ճանա-
պարհորդը հանդիպած է խաբանին 630 մար-
տին, անոր մայրաքաղաքին մէջ, որ է Հօ, սպա
կոչուած Գունդուգ: խաբանը քիչ յե-
տոյ արշաւանք մը կը կատարէ զէպի Բահլ.
կը գրաւէ մենաստան մը, որուն թանկագին
իրերը աւարել կ'ուզէ: Նոյն գիշերը երազի

մէջ կը տեսնէ Պի-շա-մէն աստուածը, որ
կ'ըլտէ. Ո՞ր ոյժի վրայ վստահացած կը յան-
դգինիս կործանել այս մենաստանը. եւ կը
միտէ նիզակը անոր փորն եւ կողը թափան-
ցանց: խաբանը ընդոստ կ'արթննայ քունէն,
կը զգայ հարուածին պատճառած ցաւը. կը
պատմէ եւ կը խնդրէ կանչել կրօնաւորները.
բայց ան անոնց զալէն յառաջ կը փչէ հո-
գին¹¹:

Թէ այդ մահաբեր հարուածը Ձերու խա-
բան երազի՞ մէջ, թէ պատերազմի դաշտի
վրայ ընդունած է, կը մնայ խնդրական. յա-
մենայն դէպս այն ստրջանքը, զոր յայտնած
է մահէն յառաջ շատ համաձայն կը հնչէ այն
մահասարսուտ բօթին, որ լսուած է «ի կիրճս
ճանապարհաց երկից աշխարհացն», զոր յի-
շեցինք: Ձերու խաբանի խոստովանութիւնը,
թէ «Հասին ի վերայ իմ հէնք... զի ոչ կացի
ես յախատանի, այլ ձգտեցայ յանպատշաճ
թաղաւորութիւն» կը հաստատեն չին աղ-
բիւրներ, որոնց համաձայն մանր թագաւոր-
ներ կամ իշխաններ խնդրած են Ձիներու օգ-
նութիւնը ընդդէմ Թիւնդ-չէ-հուի¹², որ օր
աւուր կը ձգտէր նոր նուաճումներու:

խաբանի որդին Շաթ դարձաւ անշուշտ
իւր սակաւաթիւ տոհմակիցներով հայրենի
տունը եւ գրաւեց իշխանութիւնը: Ինքն է
անտարակոյս այն Սէ-չէ-հու խաբանը, որ
633ին, ըստ չին աղբիւրին, շարժեց բանակը
Սողդիանէի վրայ, թերեւս իր հօրը արեան
վրէժը լուծելու համար, բայց տուժեց, ինքն
ալ, իր կեանքը:

Այսպէս միայն կարելի է հաշտեցնել
հայկական եւ չինական աղբիւրներու իրարմէ
խոտորոզ տեղեկութիւնները¹³:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

¹¹ Ed. Chavannes; Journal Asiatique, serie 9, t. 18 (1901), 553—555.
¹² Deguignes, Geschichte der Hunnen und Türken, übersetzt von Dühert, I, 597. Marquart, WZKM, 12, S. 192.
¹³ J. Marquart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, S. 498.

ՈՄԵՏՈՒՆԵՑՑ ՆԵԹԵՐՈՐՈՒԹԻՒՆԸ

ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐՈՒ ՅԱԳՈՒՄԸ

Մովսէս Խորենացի Ամատունիներու նա-
խարարութիւնը վաղարշակ Արշակունի թա-
գաւորէն եւ անոր ժամանակը հաստատուած
շաւանդեր, այլ շատ ուշ շրջանի մէջ եւ այն՝
Արտաշէս Բ. թագաւորէն: Կը գրէ՝ «Յաւուրս
սորա ասէն եկեալ զազգս Ամատունեաց ի
կողմանցն արեւելից Արեաց աշարհին: Բայց
են սոքա բնութեամբ Հրեայ ի Մանուէայ ու-
մեմնէ, որոյ որդի իւր մեծահասակ եւ ուժեղ
Սամսոն անուն կոչեցեալ, որպէս սովորու-
թիւն է Հրէից ըստ յուսոյ զնախնեացն կոչել
զանուանս: Բայց է ճշմարիտ եւ այժմ իսկ
անձնեայք եւ բարեձեւք ըստ պատշաճի վայել
են ամենայն իրօք եւ ուժեղք: Տարեալք են
սոքա ի յԱրշակայ առաջին ի Պարթեւաց թա-
գաւորեցելոյն եւ յառաջադիմութեամբ ան-
դրէն յԱրեաց աշխարհին ի պատիւ հասեալք
ի կողմանս Ահմատանի: Բայց թէ յի՞նչ
պատճառաց զայլուստ նոցա այսր ոչ գիտեմ,
այլ պատուին յԱրտաշիսէ գեղիւք եւ զաս-
տակերտօք: Եւ անուանին Ամատունիք, որ-
պէս թէ եկը¹: Եւ կէսք ի Պարսից Մա-
նուէանս զնոսա կոչեն յանուն նախնոցն»
(Պատմ. Հայոց, վեներտիկ 1881, էջ 288—
289):

Չարմանալի է որ Խորենացին ԱՀՄԱ-
ՏԱՆԻ նմանութենէն չէ ստուգարանած, որ
Հ. Ինճիճեանի համաձայն հնարաւոր է (Հնա-
խօսութիւն, Բ., էջ 164, ծն. 1): Եւ կամ
նոյն իսկ չի բղխեցնել ՄԱՆՈՒՆ²:

Ղափանցեան կը գրէ՝ «Ոտից Խորենա-
ցին կազմում է խորխորունի նախարարու-
թիւնը, այսինքն պիտի ընդունենք որ այդ
ազգեցիկ Ֆէոդոլական իշխանութիւնը խու-
րիական ծագում ունի, ինչպէս Մանդակու-
նիները Manda ցեղից, Սլիւնիները Sale ցե-
ղից (Salak եւ Malak անունները), Ամատու-
նից»

¹ Թովմաս Արծրունի կը գրէ՝ իսկ զանուն քա-
ղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգա-
բանի Արտաշէսի ձեռակերտ կամ թէ Արտաշէսի եկը,
զի ըստ պարսիկ ձայնի Մատ եկը թարգմանի (Պատմ.
Արծրունեաց, Կ. Պ. 1852, էջ 57):
² Հ. Բարսեղ Սարգիսեան շատ լաւ ուշադիր
եղած է որ Մովսէս Խորենացիի «հնարադիմութիւնն» է
Ամատունիներու հրէական ծագումը: Ան կը միտի ըն-
դունելու թէ «ի ժամանակի Տիգրանայ հանդիպեցաւ
նոցա մուտքն ի Հայս...» (Ազգաթանգեղոս եւ իւր բազ-
մազարեան գաղտնիքը, վեներտիկ 1890, էջ 89):

նիները Mada (Մեդացի) ցեղից եւ այլն:
Հայոց խոս արտասանութիւնը ցոյց է տալիս
որ Խորենի անունը հնչւել է խոս(ս)օ ձայ-
նաւորով, ունենք նաեւ խոս բառը ժլատ
իմաստով, որը նոյնպէս այդ ցեղի անունից
է մնացել, թերեւս որպէս յատկանիշ դրանց
առեւտրական լինելու համար (Պատմութիւն
Ուրարտուի, Երևան 1940, էջ 34—35, ուր
եւ հմմտ. Ռշտունիներու ծագումը, էջ 226):

Ամատունիները կրնան ուրարտական սե-
րունդէ ըլլալ (հմմտ. իմ «Գնունեաց եւ
Ռշտունեաց նախարարութիւնները, Վիեննա
1952, էջ 4 եւ 58): Բամաջեան Ամատունի
կը նոյնպէս Ամադանի հետ (Իսկական Պատմ.
Հայոց, էջ 56. հմմտ. Բանասէր, Գ. հոր.,
էջ 193, 239, 314):

ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐՈՒ ԲԱՐՁՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԸ

«Ամատունեաց տոհմը Հայ նախարարա-
կան տների մէջ առաջիններից մէկն էր, գոնէ
Գ. եւ Ե. դարերում» (Յովսէփեան Գար.
Գ. եւ Ե. դարերում) (Յովսէփեան Գար.
արքեպ. Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ
հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան,
Պրակ Գ., Նիւ Եորք 1944, էջ 25—26):

Գահնամակի մէջ եօթանասուն նախա-
րարութիւններու վրայ ԺԵ. բարձր կամ աս-
տիճանը Ամատունեաց նշանակուած է, իսկ
ներսէս Պարթեւի վարքի մէջ տրուած նա-
խարարական ցանկին մէջ (հարիւր վաթսունի
վրայ) անոնց ԺԱ. թիւ. աստիճանը յատկա-
ցուած է (Ալիշան, Այրարատ, վեներտիկ
1890, էջ 195 եւ 430 ու Մեսրոպ Երեցու
Պատմութիւն Ս. Ներսէսի 1853, էջ 32):

Հետեւաբար Ամատունեաց նախարարու-
թիւնը բաւական բարձր դիրք ու աստիճան
ունէր: Գալով Պատմագիրներու յիշատա-
կութիւններու, է. նախարարն է վաչէ Ամա-
տունի, որ Ներսէս Պարթեւի կ'ուղեկցի զէպի
Կեսարիա (Չ. Սովետք, էջ 25): Դանիէլ Ծե-
րունիին առաքուած չորս նախարարներու
վրայ Գ. ն է կարէն Ամատունի (Փ. Բուզանդ,
Պատմ., վեներտիկ 1933, էջ 49): Իսկ Ներ-
սէս Պարթեւի ուղեկից ութը նախարարներու
չարքին մէջ ամէնէն վերջը դրուած է «Պարգեւ
իշխան տանն Ամատունեաց» (անդ, էջ 81):
Ղ. Փարպեցիի մօտ Արտաշատի ժողովի մաս-
նակցող տասնութը նախարարներու ԺԱ.
անդամն է վահան Ամատունի (Պատմ., վե-

զաղափարակից գործակիցներուն (Պատմ. Արժր., Ս. Պետերբուրգ 1887, էջ 84):

Հաւանորէն ազգադաւ վարազ-շապուհի կամ թէ ուրիշ անանուն, բայց ազգասէր Ամատունի նիզակակիցի մը որդին ըլլայ ՄԱՆԳԵՆ, որ Պարսկաստան առաքուած թուղթը կը ստորագրէ (Մանգեն Ամատունեաց տէր, Գիրք Թղթոց, էջ 42):

Արդեօք կարելի՞ է խորհիլ թէ Ամատունի տոհմին ուրիշ մէկ ճիւղէն ըլլայ «ՆԵՐ-ՍԷՍ Ի Սամոնեան», որ Դուրինի Բ. Ժողովին կը մասնակցի (անդ, էջ 74):

Գարեգին արքեպիսկոպոս (ապա կաթողիկոս) Յովսէփեանի կարծիքով Մանգենի որդին է ՄԱՆՈՒԷԼ կամ ՄԱՆՈՒԷԳ Ամատունի, որ «Պէտք էր ապրէր 510—590 տարիներու մէջ» (Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Գ., Նիւ Եորք 1944, էջ 27): Եւ նոյն Բանասէր արքեպիսկոպոսին համաձայն ա՛ն է հիմնադիրն ու կառուցանողը Պողոսիանքի:

Պողոսիանքը — այժմ Պողոնի — կը գտնուի Քանաքեռի եւ էլառ կայարանի միջեւ, խճուղիէն դէպի հիւսիս, ձորի մը մէջ եւ «է աւերակ մեծ եկեղեցի մը ի կոփածոյ քարանց» (Շահաթունեան, Ստորագրութիւն..., Բ., Վաղարշապատ 1842, էջ 162):

«Պողոսիանքը եռանաւ բազիլիկայ է՝ եւ կասկած չկայ, որ ան երկարածիք չէնք մըն էր, գմբեթաւոր, առանց անջատ մոյթերու, շատ մը երեսոյթներով կապուած Միջագետքի բազիլիկ շէնքերու հետ: Անոր պատկի հորիզոնական թեւերի վերայ, նայողի ձախ կողմից քանդակուած է մի ձիաւոր, վաղող ձիու վերայ, աղեղը քաշել է առիւծի կամ վազրի վերայ, պարզ չէ: Զիւարթ հազել է մինչեւ ծնկերը հասնող գոտեւորուած բաճկոն, կիսադէմ, գլխարկի ձեւն անորոշ յետեւի կողմից ջարդուած լինելու պատճառով, ջարդուած են մասամբ եւ քիթն եւ բերանը... վատ չէ վաղող ձին գեղարուեստական ընկալանութեամբ, պոչի հանդոյցը սասանեան արուեստի մէջ ընդունուած ձեւով, երեւում է ձիու թամբը, սանձը եւ պոչակալը գարգարանքներով: Այս պատկերաքանդակին գլխին գրուած է ՄԱՆՈՒԷԳ ԱՍՍՏՈՒՆԵՍ ՏԷՐ, երեք բառից բաղկացած մի թանկարժէք արձանագրութիւն, որ ոչ

միայն տաճարի հիմնադիրն է մատնանշում, այլ եւ հայ հնագրութեան ամենահին մնացորդներից մէկն է, Զ. դարի առաջին կիսից» (Յովսէփեան, անդ, էջ 14):

«Պողոսիանքի հիւսիսային դրան վերայ եղծուած արձանագրութեան մնացորդներից կարդացուած է Սահակ անունը, գրչութեան ձեւից դատելով հին, Սահ(ա)կ անունը կրկնուած է նաեւ հիւսիսային պատի արեւմտեան լուսամուտի պատկի թեւի վերայ...: Մենք շատ եւ շատ հաւանական ենք համարում, որ նա հէնց Ներսէս Բ. Ժողովին մասնակից ՍԱՀԱԿ Ի ՄԱՆՈՒԷԼԵԱՆՆ Է» (անդ, էջ 27 եւ Գիրք Թղթոց, էջ 74): Այսպէս՝ կը սերին Մանգեն-Մանուէլ-Սահակ-Կոտիտ:

Վերջինիս անուան կը հանդիպինք Մօրիկ կայսեր առնչութեամբ: Սա հայ աւագանին կը ջանայ ջնջել եւ կը հրահանգէ Թրակիա համալսարանի — նենգամիտի գործ: Անոր ծրագիրը Հայերը կը հասկնան եւ «Սկսան փախչիլ ի կողմանէն յայնմանէ եւ գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»: Սակայն Պարսիկներու թագաւորն ալ կը ցանկայ գանոնք «ի ծառայութիւն իւր» նուաճել: Եւ ահա Սամուէլ Վահեւունի, Ատատ Սորխունի, Մամակ Մամիկոնեան, Ստեփան Սիւնի եւ ԿՈՏԻՏ Ամատունի իրենց զէմ առաքուած զօրավարին վրայ յարձակելով անոր գանձերը կը յախչտակեն: Ան իր կեանքը հազիւ թէ վրկած՝ կը փախչի: Հայերը վճռական են. կ'ուզեն «զերկիրդ ի մեզ դարձնել» եւ Նախճաւանի մօտ պատերազմը տեղի կ'ունենայ: Պարսիկներու եւ Յոյներու կողմէ կը ձգտուի երկուստեք խոստումներու վրայ անոնց մէջ զժրախտարար երկպառակութիւն կը ծագի եւ ճեղքուածքը կարելի չ'ըլլար կարկտել: Կոտիտ, Մամակ ու Ստեփան ինքզինքնին Պարսիկներու ծառայութեան կ'ենթարկեն (Սերէոս, Պատմ. Ի Հերակին, Կ. Պ. 1851, էջ 81—82): Անոնք նախ պատիւներու կը հասնին ու պարգեւներու կ'արժանանան, բայց հայրենիքը այլ եւս տեսնել չեն կրնար: Ժամանակ մը վերջ Կոտիտ Մրծուինի զեսպան կը նշանակուի եւ ապա (նենգութեամբ) կը սպանուի (անդ, էջ 95¹⁴): Յովսէփեան կը գրէ «Կոտիտի հանդէս գալը պէտք է նշա-

¹⁴ Հմմտ. անդ էջ 92:

նակել 590—600 թուականը եւ մահն ալ 600ին» (անդ, էջ 27):

Հերակիլի յաջորդին Կոստանդինի գահակալութեան ատեն Արարացիները Տարօնի վրայով Բզնունիք ու Աղիովիտ կը նուաճեն, եւ միայն երեք հայ նախարարներ իրենց բանակը կը համախմբեն եւ արշաւանքի գոյժը կը հասցնեն ուր անկ է: Ասոնք են՝ Թէոկորոս Վահեւունի, Ուշեան Առաւելեան ու ՇԱՊՈՒՀ Ամատունի, որ կրնայ նախորդին որդին ըլլալ (Սեր., էջ 170): Արդեօք կրնա՞յ այս Շապուհն ըլլալ այն, որ 667ին Բիւզանդիոնի Կոստանդին կայսեր զէմ ապստամբելով եւ ձիւն վար իյնալով մեռաւ (Ալիշան, Յուշիկը հայրենեաց, Բ., էջ 335):

Շապուհի քաջ, բայց զժրախտ որդիներն ըլլալու են ՎԱՐՍԱԶ-ՇԱՊՈՒՀ եւ անոր եղբայրը, որուն անունը Ղեւոնդ Պատմագիրը լրած է եւ որ՝ անոնց մասին սա սրտայոյզ տեղեկութիւնները կը հաղորդէ՝ «Իսկ գնալով յանձնորոշելի տանջանս խոշտանգէին եւ պահանջէին ի նոցանէ բազում ոսկի եւ կշիռ արծաթոյ եւ երգամբ դաշինս արարեալ հաւատարմացուցանէին զերդուան ստութեան: Եւ նոքա առ վտանգին նեղութեան գրազում մթերս տային ի ձեռս թշնամեաց...», սակայն անօգուտ եւ անօրէնները «բանային զկենդանութիւն նոցա եւ զփայտէ կախեալ զանապարտէին զնոսա» (Ղեւոնդ, Պատմ., էջ 57—58): Այսպէս՝ վարազ-Շապուհն եւ իր եղբայրը կը մեռնին:

Անոնց յաջորդ Ամատունիները, որքան կ'երեւայ Բագրեւանդի ու Կարսի ճակատամարտերուն չեն մասնակցած, նաեւ Կարին քաղաքի պաշարումին՝ «Եւ որք ի տոհմէն Ամատունեացն եւ Տրունեացն մնացին անդէն ոմանք յամուրն բերդի ի Դարինս զեօղ եւ յետոյ Աշոտ Բագրատունիի հրաւերին ընդ-տալելով՝ «Սաղաքեալ յառաջ երթային ի վերայ Արճէն աւանի բրել զնա ի հիմանց» (անդ, էջ 178), սակայն յաջողութիւն չեն ունենար (անդ, էջ 179—180):

Բուղայի անդթութիւններու ժամանակ ՎԱՀԱՆ Ամատունի փախուստի կը գրիմէ, մինչ ա՛ն է որ կանխաւ Մուսէի զէմ «ութ հարազատօք իւրեանց» պատերազմած էր (Արժր. Պատմ., էջ 121 եւ 146):

Այս ութ հարազատներէն են ՄՈՒՇԵՂ. ԱՄԻԹ եւ ՍԱՀԱԿ, որոնք Գուրգէն Արժրունիի առաջարկին անսալով արիարար 852ին կը կոուին այլազգիներու դէմ (Հմմտ. Թ. Արժր., էջ 164):

Արարներու բռնակալութեան տակ Հայերը մշտապէս կը տառապին եւ երբեմն հազիւ քիչ մը հանգիստ վայլած՝ աւելի ծանր տառապանք մը զիրենք կը ճնշէ: Ահաւասիկ Ովբեղլայի իշխանութեան ժամանակ՝ «Ոչ ոք էր տէր ընչից իւրոց, առ հասարակ վարէին յաւարի»: Ժողովուրդը կը մնայ անօթի եւ անինչ: Մերկ ու բոկ: Դարմանը կը խորեւ անինչ: Մերկ ու բոկ: Դարմանը կը խորեւ անինչ: «Երթալ յաշխարհն Յունաց» եւ տառապանքներու առաջնորդ կ'ըլլան «Շապուհն ու Սամուէլ Ամատունեաց եւ Համամ, որդի նոր տոհմէ Ամատունեաց եւ Համամ» (Ղեւոնդ, րա եւ այլք ի նախարարաց Հայոց» (Ղեւոնդ, էջ 202): Բայց այս՝ թշնամիին հաճելի չէ եւ հետագայում կ'ուզէ գաղթը ձախողեցնել: Ընդիմութեան կը հանդիպի եւ արեւհեղուցիւն տեղի կ'ունենայ: Փախստարիւնները բարեբախտարար «ընդ Եգիպտոսն կանները բարեբախտարար «ընդ Եգիպտոսն ի Պոնտոս» կ'անցնին (788) եւ Բիւզանդիոնի ինքնակալը յանդուգն առաջնորդներուն «տայր պատիւ» (անդ, էջ 203):

Բաւական ժամանակ յետոյ — Սմբատ թագաւորի ատեն — Գագիկ եղբայր մեծի իշխանին Աշոտոյ երկու եւս համախոհ Ամատունի արամբ յանկարծակի ի վաղակաւորն յեցեալ եւ ի վերայ յարուցեալ իշխանայանք խորխոտացելոյն սրոյ ճարակ տային պանծ խորխոտացելոյն սրոյ ճարակ տային պանծ (միւս Գագիկը) եւ այնպէս յերկիր անկեալ վախճանեալ թաղեցաւ ընդ հարս իւր» (Յովհ. Կաթ. Պատմ. Հայոց, Երուսաղէմ 1867, էջ 222):

Գագիկ Ապուրուանին մահուան համախոհ եւ գործակից են երեք եղբայրներ «ի տանէն Ամատունեաց՝ ՇԱՊՈՒՀ եւ ՎԱՀԱՆ եւ ՍԱՐԱՅ եղբարք միմեանց» (Թովմ. Արժր. Պատմ., էջ 267—268):

Այս Շապուհ Ամատունին զժուրաւ թէ նախորդին հետ նոյնանայ, զի ժամանակը չի յարմարիր, քանի որ 895ին Գուրգէն Արժրունիին զէմ պատերազմած ատեն կը վերաւորուի (անդ, էջ 199):

Կեղծ Շապուհ Բագրատունիի աւանդախոսն Պատմութեան մէջ կայ՝ «Եւ էին եղբարք Ե. ի տանէն Ամատունեաց եւ էին անուանք նոցա ԿՈՒԱՆ, ՎԱՀԱՆ, ՔՈՒՐԹՆ,

ՍԱՐԱՅ, ԻԶՏՆ (Յագր), այրք քաջք եւ ա-
նուանիք» (Պատմ., էջմիածին 1921, էջ 74) :
Նախորդ դէպքի յարաբերութեամբ՝ «Ի
նոյն ժամայն դարձաւ Սարի ընդդէմ նորա
(Ապուրվանայ) մինչ զեռ չէր վերուցեալ
զձեռն յերեսացն քաջեց զըւերն (թուրն) ի
պատենիցն եւ եհար ի վերայ աջ դեւին
(թեւին) եւ գլուխն ձախի ձեռամբն ի գետին
ձգեց: Եւ պատեցան զըւերը եւ կտրեցին
զգլուխն նորա եւ ետուն ի մարդ մի, որ տա-
րաւ առ Սմբատ թագաւորն» (անդ, էջ 75) :
Իսկ անկէ առաջ՝ «Ապա եկն մարդ մի Ամա-
տունի, անուն նորա Սարի, որ էր ի բերդն
ձախկին, ելաւ եւ եկ ընդդէմ եւ նա զբերդն
եւ ուրախ եղեւ Դէրէնն ու ետ իւր դանձ եւ
ձիս եւ ջորիս եւ հանդերձս եւ մեծարեաց
զնա յոյժ» (անդ, էջ 48) :

Գր. Դերենիկի հաւատարիմ իշխաններէն
է ԱՊՈՒՍԱԿՐ Ամատունի, որ անոր սպանու-
թեան առթիւ (886) կը կալանաւորուի. «Բայց
միայն զնահապետն Ամատունեաց զԱպու-
սակը ձերբակալ առին զնացին ի քաղաքն,
բարձեալ եւ զդին սպանելոյն տարան ընդ
իւրեանս ի պարձանս իւրեանց» (Արծր.
Պատմ., էջ 227) : Պատմութիւնը կը լու-
կուսակրի կեանքի միւս պարագաներն ու
մահը :

Յետագային (981) կը յիշուի Աշոտ թա-
գաւորի Հռիփսիմէ կոյս աղջկան (կեղծ)
կտակագրին մէջ իբրեւ վկայ ՀԱՄԱԶԱՍՊ
իշխան Ամատունեաց (Սմբատեան, Երնջակ,
էջ 422—425 եւ Ոսեան, Վասպուրական-
Վանի վանքերը, Բ., էջ 567—569) :

Յովհաննավանքի մէջ կը գտնուի հե-
տեւեալ արձանագրութիւնը՝

Կամաւն բարերարին Աստուծոյ Հաւր եւ
Որդւոյ եւ Հոգւոյ եւ Թէոզոս մականուն
Չրքին, իշխանաց իշխան, որդի Անրերդոյ
Քրդին իշխանաց իշխանին, որդւոյ Տայրին,
թոռն մեծ Քրդին, որդի արի եւ քաջին Վա-
չէի, զայս հաստատ արձանագրեցաք եւ
տուաք ի մեր պապանց, հարալ զանձագին
հայրենիք, ի հանդէն Սերկեւելոյ ի սուրբ
Կարապետս եւ ի սուրբ կաթողիկէս, որ
(ուր) եղեալ էր շիրիմ պարոն հայրն իմ այր
Ամատունի Տէրնխոռն Կայծակով էնգութա-
նաւի գլխովն որ ճանապարհն Գուրթայ ի
Սերկեւելոյ ծովն եւ չայի ըզեզ եւ Կաւանցն
հայրենիք է Սուրբ Կարապետիս: Այս իմ

տուած հանդս ի Սերկեւելոյ հանդէն էլ հանց
հաստատ հայրենիք է Սուրբ Կարապետիս:
Եւ ես Սուրբ խաթուն, ամուսին Անրերդեցի
Քրդին, մայր Չրքին եւ Սայրիկին, կրկին
հաստատեցի զվերոյգրեալս եւ եղբարքս խոս-
տացան մի քառասուն պատարագել զՔրիս-
տոս ամեն ամին... (Շահխաթունեան, Ստո-
րագրութիւն Կաթ. էջմիածնի եւ հինգ պա-
ւառացն Արարատայ, էջ 405) :

Այս արձանագրութիւնը անթուական է:
Պատմական կէտեր կը ցուցնեն թէ 1870էն
առաջ գրուած ըլլայ: «Այր Ամատունի» ի
մասին Հ. Ալիշան կը գրէ՝ «Յայս վայր, որ
է իբրեւ միջոց 150 ամաց գտանեմ յազգս
եօթն գլխատակ մարացի տոհմիս Վաչու-
տեանց որոց բաղդադէսլ իմն է իշխանանալ
կողմանցս, ուր գրեալ է համատոհմը նոցա
Ամատունիք տիրէին ի նախնունն, վասն որոյ
թուի յետոյ պայագատին զհայր իւր կոչել
Այր Ամատունի» (Այրարատ, էջ 254) :

Թէ Ամատունիներու սերունդէն են Վա-
չուտեանները, որոնք անոնց հողերէն մասի
մը տիրացած էին, այդ՝ ուրիշ առթիւ, իսկ
այժմ առաջ պիտի բերեմ ուրիշ արձանա-
գրութիւն մը եւս որուն մէջ կը հանդիպինք
Ամատունի մականունին. «Շնորհօքն Աստու-
ծոյ ես մեծ Նախիջեւանու Նունուց Ագա-
րեան Ամատունույ Պետրոսի որդի մահտեսի
Յովհաննէս եկի ի տիրապահ քաղաքս եւ
տեսի քայքայեալ զայս Աւետեաց սուրբ Աս-
տուածամանայ եկեղեցիս եւ ապաւինեալ յա-
մենակարողն Աստուած ձեռն արկաք ի շինել
ի տեառնապարգեւ ընչից մերոց. նախ զա-
րեւմտեան կոտորմն ի հիմանէ յաւերամբ
տեղւոյ եւ ապա զերեսին որմունան ի կիսոյն
սկսեալ հանդերձ կաթողիկէիս եւ զանգա-
կատամբ եւ ամենայն յօրինուածովք աւար-
տեցաք ի հայրապետութեան ամենայն Հայոց
Տեառն Դուկասու սրբազան կաթողիկոսի եւ
ի թագաւորութեան երկրիս Վրաց երկրորդ
Հերակլեսայ քրիստոսապաակի ի ՌՄԼԳ
(1784) թուականին Հայոց ի Սեպտեմբերի
մուսն» (Ջալալեան, Ճամբորդութիւն ի Մեծն
Հայաստան, Տիփսիս 1858, էջ 73) :

Հ. Ալիշան կը գրէ՝ «Յետ իբր հազար
ամաց յելս կոյս ժԸ. դարու կային ի Մերիա
եղբարք երկու տոհմիկք Յովսէփ եւ Ելիաս,
որդիք Սահակայ կոմսութեամբ պատուեցե-
լոյ ի Հռովմայ գահէն, զորոց գրէր ոմն ի

մերոց հարց, յամի 1774, եթէ ստուգել լի-
նել յազգէ Հայոց ի Թիւրք աւանէ, յԱմատու-
նեաց տոհմէ 3900 ամաց հետէ որդի զհայր
փոխանորդեալ, այլ ոչ գիտեմ որպիսի
վաւերական վկայականք էին նոցա» (Այրա-
րատ, էջ 196) :

Մականուններու կամ տոհմանուններու
նմանութեան ու կրկնութեան հետեւանքով
կեղծուած կամ յարմարեցուած ազնուական ու
ամիրայական գերդաստանները յետին դա-
րերու մէջ ցանցառ չեն երեւցած հայ իրա-
կանութեան մէջ, ուստի եւ տարակոյսով
ստիպուած ենք նայիլ այս աւանդութիւննե-
րու եւ տեղեկութիւններու վրայ :

Համանուն տոհմանուն ունեցող գեր-
դաստաններ սիրով եւ հաճոյքով պիտի ու-
զէին հին Ամատունիներու սերունդէն ըլլա-
լու, զի պատմութեան մեզի հասցուցած նա-
խարարներն ու իշխանները — բացառու-
թիւններ քիչ կան — եղած են քաջ ու հայ-
րենասէր եւ գիտցած նախարարական միւս
աներու հետ լաւ յարաբերութեան մէջ մնալ
եւ երկրին օգտին ծառայել անվերապահ ու
անձնուէր :

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՅՈՒՑԵԿ ՀՆՅԵՐԷՆ ԶԵՌՇԳՐԱՅ
ՆԻԿՈՍԻՇՅԻ Ի ԿԻՊՐՈՍ
(ԵՅԺԾ ՓՈՒՆԳՐՈՒԵԾ ԵՆԹԻԼԻԵՍ,
ԿԵԹՈՂԻԿՈՍԵՐԵՆ)

(Շարունակութիւն)

5.

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Հիմ. Թ. 11: Ժէ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 374: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 29,2 × 20,4
հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ բուղբ: —
ԿԱԶՄ՝ չունի: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱԶՊԱՆԿ՝ չունի:
— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմալոյժ վիճակի մէջ, սկզբէն,
— մէջէն, վերջէն քղեր ինկած: — ԳԻՐ՝ բոլորգիր: —
ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ իւրաքանչիւր գլխաց
սկիզբը: — ՆԿԱՐ՝ չունի: — ԶԱՐԳԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒ-
ՍԱՆԳՐԱՆՔ՝ կամ գլխաց սկիզբը: — ԽՈՐԱԳԻՐՔ՝
կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ժէ. դար: — ՏԵՂԻ՝ ան-
ծառօք: — ԳՐԻԶ՝ Արիստակէս:

Մատենա է Վարք Հարանց: Չեռագիրը
կազմալոյժ վիճակի մէջ ոչ միայն թղթերու
ետեւառաջութիւն կրած է, այլ եւ ինկած են
անկէ թղթեր: Պէտք է ամբողջը դասաւորել
Կ. Պոլսոյ 1720ի հրատարակութեան վրայէն:
Հմտ. Տաշեան, Յուլիոս Միլիթ. Մատենա-
դարանի, Թ. 66, էջ 294—303:

Յիշատակարանք. 1. Թղ. 374ր. Յիշա-
տակարան է գրոց Հարանց վարուց: Փառք...:
Աստանօր դրցեալ եւ զբաւ առեալ կատարե-
ցաւ հոգէզուարճ բուրաստանս որ ասի Հա-
րանց վարք |||: Շարունակութիւնը ին-
կած:

2. Թղ. 33ա. Բուն գրչէն. «Ով ընթեր-
ցողք, յիշեսցէ ի սուրբ աղօթս ձեր զանար-
ժան Արիստակէս երէց գրիչս ի Քրիստոս»:
Նոյնը նաեւ 274ա:

3. Թղ. 8բ. Նոր գրչէ. «Զվերջին ըստա-
ցողս յիշեցէք Սարգիս վարդապետս եւ զձնօղ
զնիկօղոսն եւ զվարդենին եւ զամենայն ա-
րեան մերձաւոր իմ եւ Աստուած ողորմի
ստացէք»: Նոյնը կրկնուած յաճախ նաեւ
այլուր:

6.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Յ Ո Յ Ք

Հիմ. Թ. 14: ՌԿԵ = 1616:

ԹՈՒՂԹՔ՝ 483: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2 × 15 հմ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ բուղբ: —
ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱԶ-
ՊԱՆԿ՝ 2 սկիզբն եւ վերջը: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ:
— Դատարկ 1ա, 4բ, 483բ: — ԳԻՐ՝ մտք-չապիր: —
ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ 5ա: — ՆԿԱՐ՝ չունի:
— ԶԱՐԳԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒՍԱՆԳՐԱՆՔ՝ կամ: — ԽՈՐ-
ԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1616: — ՏԵՂԻ՝
թոխք: — ԳՐԻԶ՝ Կարապետ:

Մատենա է Մասեր Հարանց Վարուց.
ուր կան.

1. Թղ. 1բ—4ա. Յանկ գրոցս Հարանց
վարուց:

2. Ա. 5ա. Վկայութիւն վասն երանու-
թեամբ յիշատակեալ արիւթեան եւ ունկն-
գրութեան: Առ որս բանս մեր աջողի ի նեղ
եւ ըստ Քրիստոսի ճգնութեանն հանդիպունն
այսուհետեւ արձակի շտաւեղ: Չի որպէս
ամենայն պողոնոյն նախ արձակի ծաղիկն...:

= Յովհ. Կլիմաքոս, Դ.:
Չեռագիրս մէջ բազմաթիւ զլուխներ ներս առ-
նուած են Յովհ. Կլիմաքոսի եւ Յովհ. Աստուածա-